Մեծ Սարիար

Մակերես՝ 19.3կմ^2

Բնակչություն՝ 359

metssariar.shirak@mta.gov.am

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի տարածաշրջանում, հյուսիս-արևմուտքում:Գյուղը հիմնադրվել է 1820թվականին, Արևմտյան Հայաստանի՝ Բասենի, Կարսի Ալաշկերտի գավառներից ներգաղթած ընտանիքների կողմից: Սկզբում ներգաղթած ընտանիքների թիվը եղել է ընդամենը 11-ը, որոնք հետագայում բազմանալով շենացրել են գյուղը: Այժմ գյուղում ապրում են 96 ընտանիք՝ 359 բնակչով:Գյուղի բնակիչները զբաղվումեն հիմնականում անասնապահությամբ և հողագործությամբ:1907 թվականին համայնքի միջոցներով գյուղում կառուցվել է եկեղեցի, որը ավերվել է 1988 թվականի ավերիչ երկրաշարժի հետևանքով:Գյուղը սահմանակից է Կրաշեն,Ջաջուռավան, Լեռնուտ, Փոքր Սարիար, Արփենի համայնքներին: Մինչև 1991 թվականը գյուղում տնտեսավարման ձևը եղել է կոլեկտիվ- սովխոզային: Գյուղը գտնվում է սեյսմիկ գոտում: 1988 թվականի աղետալի երկրաշարժի հետևանքով ավերվել է համայնքի բնակելի ֆոնդը, կուտուրայի տունը, դպրոցը և գյուղապետարանը: Գյուղը այս տարիների ընթացքում տվել է բազմաթիվ անվանի մարդիկ, նրանցից շատերը ապրում և ստեղծագործում են մեր օրերում: Գյուղը իր մասնակցությունն է ցուցաբերել Հայրենական մեծ պատերազմին և ունեցել է անվանի մարտիկներ:Գյուղը իր փոքրիկ ներդրումնէ ունեցել նաև Լեռնային Ղարաբաղի պաշտպանության ժամանակ:Համայնքի կենտրոնի հեռավորությունը մարզկենտրոնից 15 կմ է , շրջկենտրոնից՝ 20 կմ, ծովի մակերևույթից բարձրությունը՝ 1905 մ , պետական սահմանից՝ 25 կմ:Համայնքի վարչական տարածքը 2326.05 հա է, կարգավիճակը՝ լեռնային:

ՀՀ Շիրակի մարզ, գ. Մեծ Սարիար
Ինդեքս՝ 2622